



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10633

658

7-39

2011

57

no. 1038

150

2002

ՍԲԻՆՅԱՆԳ ԲԵՆԿԻՆԻ ԱՔ. ԼԱՅՏԻԷՏ

ՄԻՄՆ ԶԻՕՄԼԷՔՁԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ

ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Կ Ա Մ

ՏԱՐԵՐՔ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

Պատժուծիւն վաճառականութեան եւ Ուսումնասիրութիւնը վաճառականութեան ամէն ճիւղերուն վրայ. — Առեւտրական Օրէնսգիտութիւն, Աշխարհագրութիւն, Տնտեսագիտութիւն. — Վաճառագիտութիւն. — Թղթակցութիւն Հայ. Տաճկ. Գաղ. եւ Անգլ. լեզուներով. — Արհեստից եւ արհեստական նոր գիւտերու վրայ ծանօթութիւններ. — Առեւտրական, սակարանական եւ պանքայի հաշիւներ եւ այլն.



ՀԱՍՏՐ Ա. — ՏԵՏՐ Է.



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1901

ԹՈՒՐՔԻՈՅ ԳՈՐԳԵՐԸ

1. — ՍՎԱԶԻ ՄԷՉ

Սվազցիք շատ ընտիր և շատ կարճ կտրուած բուրդ կը գործածեն, այնպէս որ Չ էնտագէ երկայնութեամբ և 1¹/₂ էնտագէ լայնութեամբ գորգ մը հազիւ Չ օխա կը կշռէ: Այս պերճանքի գորգեր, ինչպէս նաեւ շրջակաները շինուած բոլոր միւս գորգերը գնահատման հիմ մը չունին: Ամէն բան կախում ունի գնողներու և ծախողներու ճաշակէն, արամաբարութենէն: Վերոյիշեալ չափով գորգ մը խիստ շատ անգամ 7-8 օսմ. ոսկիի կը ծախուի, մինչ միեւնոյն տեսակէ ուրիշ գորգ մը 3-4 ոսկիի կ'երթայ: Սվազի մէջ, ինչպէս նաեւ շրջակաները շինուած գորգեր դիւրաւ չեն քուիր: Քանի մը վաճառականներ, իրր փորձ, արտածեցին այս գորգերէն, բայց չահաւոր դին մը չգտան: Գործուածքը թէեւ աղէկ է, բայց գոյներն ու նկարները գոհացուցիչ չեն: Վերջերս երեք հոգի, 200 ոսկոյ պղտիկ դրամադրութիւնով, առեւտրական ընկերութիւն մը կազմեցին, Սվազի մէջ գորգեր շինելու համար: Հիմա 20 գործատեղան և 80 գործաւորուհի ունին: Գործաւորուհիներն օրական 20-40 փարայ կ'առնեն, 10 ժամու աշխատութեան մը համար: Մէն մի գործաւորուհի օրական 4500-5000 հանգոյց կ'ընէ: Ընկերութիւնը կազմողները կը յուսան ամիսն երկու գորգ շինել 20 գործատեղանով, բայց չի կարծուիր թէ յաջողին ծախել: Մրցակից ունին գեղացիները, որք հաշիւ չեն ըներ թէ գորգ մը քանի՞ կը նստի իրենց: Նախ բուրդին փարայ չեն տար: Իրենց սեփական ոչխարներէն կ'առնեն և տան կիները կը լուան, կը մանեն զայն առանց ծախքի: Յետոյ կը ներկեն շրջականերէն հաւաքուած խոտերով կամ արմատներով: Աս ալ առանց ծախքի կ'ըլլայ: Իսկ եթէ բնանկղիճի գոյներու պէտք ունենան, կը գնեն շրջուն փերեղակներէ, փոխարէն հաւ ու հաւկիթ տալով: Ու կ'սկսին գորգի շինութեան, իրր օրինակ ունենալով տան մէջ գտնուած կամ դրացիէ մը փոխ առ-

նուած հին գորգ մը: Աշխատութիւնն աւարտելուն պէս, ընտանիքին պետք չուկայ կը տանի գորգը, և ի՛նչ գին որ ըսեն կուտայ, առանց հաշուելու գործածուած նիւթերը, աշխատութիւնն ու ժամանակը: Այս տեսակ գորգերը շատ անգամ բուրդին արժէքովը կը ծախուին: Ի՛նչ որ ալ ըլլայ, գիւղացին իր գորգն 5-6 մէճխտիէի կը ծախէ և գիւղ կը դառնայ, գրպանը դրամ ունենալուն վրայ հրճուելով: Նորահաստատ առեւտրական ընկերութեան համար խնդիրը բոլորովին կը տարբերի: Նախ բուրդը պիտի գնէ երկրորդ կամ երրորդ ձեռքէ: Յետոյ օրս գլուխ 20 փարայ պիտի տայ լուալու, 1 զըշ՝ գգելու և թելին հաստութեան համեմատ 1էն 3 զըշ՝ մանելու համար: Յետոյ ներկը կայ: Այս ծախքերուն վրայ աւելցնելու է տեղւոյ վարձքը, բուրդը գնելու և պատրաստելու պաշտօն ունեցող մարդու մը և գործաւորուհիներուն վրայ հսկող երկու կիներու օրականները: Այս ծախքերուն պատճառաւ քաղքին մէջ պատրաստուած գորգերն ապահովապէս աւելի սուղ ապրանք պիտի ըլլան, քան ինչ գնով որ կը ծախեն գիւղացիները:

2. — Ի Չ Մ Ի Ր Ի Մ Է Չ

Շինութեան մէթոտներ. — Ուշարի տուները. — Կէօրտէս եւ Քուլա. —
Ընդհանուր վաճառականութիւն

« Ի զմիբի գորգ » անունով ծանօթ ապրանքները գլխաւորապէս կը շինուին Ուշաքի, Կէօրտէսի և Քուլայի մէջ: Ուշաքի մէջ մանաւանդ կը շինուին ընտիր գորգերը: Սովորաբար թուրք կիները կ'զբաղին այս գործով: Քանի մը տարի կայ որ յոյն կիներն ալ սկսած են գորգ շինել, երկու երեսի վրայ: Այս գորգ Յուճախան քիլիմ կը կոչուի: Գորգաշինութեան մէթոտները պարզ և դիւրին են: Ուղղահայեաց մեծ շրջանակի մը վերի կողմը փայտեայ զլան մը կայ, որուն

վրայ կ'անցընեն առէջը, նոյնպէս փայտէ գօտիով մը ձըգտուած: Այս շրջանակին վարի կողմն ուրիշ գլան մը կայ, որ գորգին շինուած մասերը կ'ընդունի: Գործաւորուհիները կը նստին շրջանակին առջեւ, նախապէս ներկուած ու պատրաստուած բուրդին թելերը կ'առնեն ու առէջին հետ կը հիւսեն օղակ օղակ հանգոյցով, յետոյ թեղանը ձեռք կ'առնեն, հանգոյցները կը սեղմեն փայտէ մեծ սանտրով մը և վերջապէս հիւսուած մասերը կը հաւասարցնեն մկրատներով: Բոլոր այս աշխատութիւնք կը կատարուին անհաւատալի ճարպիկութեամբ և ճշտութեամբ: Սովորաբար մէն մի գործաւորուհի ամէն անգամ նկարի մը նոյն մասը միայն կը շինէ և հետեւապէս գոց դիտէ թէ քանի՞ թել պիտի գործածէ: Բայց երբ նոր նկար մը շինել ուզուի, ամէնէն վարպետ ու փորձ գործաւորուհին կը գատուի որ իրեն տրուած ուրուագրին վրայ նմոյշ մը կը շինէ և ապա կը յանձնէ միւս կիներուն:

* * * 1899ին Իզմիրի գորգերու արտածումը մօտաւոր հաշուով հասած է 320,000 օսմ. սակի: Արտածումներու կէսէն աւելին Ուշաքի ու շրջականերուն գորգերն են: Ուշաք գլխաւոր կեդրոնն է այս ճարտարարուեստին: Գրէթէ ամէն տուն գործասեղան մ'ունի: Բնակիչք այս գործին կը պարապին նոյնքան ճարտարութեամբ որքան եռանդով, որովհետեւ գորգաշինութիւնն հասոյթի լաւագոյն աղբիւր մը եղած է իրենց համար: Արտածման հարիւրին 73ը Անգլիա գացած է, 14ը՝ Յրանսա, 2ը՝ Հոլանտա, 8ը՝ Ամերիկա, 1ը՝ Իտալիա և 2ը՝ Գերմանիա, Աւստրիա և Ռուսիա: Անգլիա գլխաւոր հրապարակն է ո՛չ թէ անոր համար որ ներածած բոլոր գորգերն ինք կը գործածէ, այլ որովհետեւ կը ծառայէ իբր մթերանոց, ուրիշ կը գնեն Ամերիկա և ուրիշներ: Արդարեւ Լոնտոն ամբողջ աշխարհի կը հայթայթէ Իզմիրի գորգերը: Յրանսա իսկ, որ Փոքր Ասիոյ հետ առեւտրական ուղղակի յարաբերութիւններ ունի, երբեմն չի վարանիր իր պէտքն հոգալ Լոնտոնի հրապարակէն, ուր ճոխ տեսակներ կը գտնուին:

(Շարուճակիի)

Հ Ի Ի Ս Ե Լ Ա Ն Ի Ի Թ Ք

Գ.

Ք Թ Ա Ն

Քթանը կամ վուշը երկբլթակ (dictyledone) տեսակին պատկանող տունկի մը կոթերէն առնուած ու մաքրուած թելն է: Բուսարանք մինչեւ հարիւր տեսակ քթանի տունկ կը համրեն. բայց անոնցմէ քանի մը տեսակը միայն կարեւոր են վաճառականութեան համար: Ամէնէն շահաւորն է Usitatissimum կոչուած տեսակը որ այժմ ամէն տեղ կը մշակուի լաւ գինով ծախուելուն համար:

Քթանի տունկին բնագաւառն անձանթ է: Սաշափ միայն յայտնի է թէ այդ տունկն անյիշատակ ժամանակներէ ի վեր մշակուած է Եգիպտոսի ու Արեւելքի մէջ եւ իբր հիւսելանիւթ գործածուած: Բարելոնի, Սուրիոյ եւ Փոքր Ասիոյ մէջ էրիկ մարդոց հագուստը բուրդէ, իսկ կիներունը քթանէ էր: Տիւրացիք իրենց նաւերուն առագաստները քթանէ կը շինէին: Քթանը հիւսելանիւթերուն ամէնէն մաքուրն ըլլալով Եգիպտացիք իրենց քահանաներուն հագուստն անկէ կը պատրաստէին, եւ այդ պատճառաւ է որ Հռովմայեցիք Իսիսի քուրմերը Linigeri (քթանազգեստ) կ'անուանէին:

Քթանը՝ իր զովացուցիչ յատկութեամբ՝ տաք երկիրներու համար կարեւոր պէտք մը ըլլալով, Եգիպտացիք քթան ու քթանէ պատրաստուած կտաւներ կը տանէին Հնդկաստան, ուր բնաւ չկար, եւ բամբակի հետ կը փոխանակէին: Քթանի ոստայնանիւթիւնն ամէնէն առաջ Եգիպտոսի մէջ ծագում առած եւ հետզհետէ զարգացած էր: Հոն այնքան ճարտարութեամբ կտաւներ կը շինէին որ անկարելի էր անոնց թելերը նշմարել: Ապա սկսան քթանէ ու բամբակէ

խառն կտաւներ շինել: Հերոդոտ կը պատմէ թէ Քրիստոսէ 6 դար առաջ Եգիպտոսի Ամասիս իշխանը՝ Յունաց հետ կընքած հաշտութեան մը առթիւ՝ բամբակէ ու քթանէ պատրաստուած ընտիր լանջապանակ մը նուիրեց անոնց թագաւորին:

Քթանի մեծ գործատուներ կան Եգիպտոսի շատ քաղաքներուն, մանաւանդ Աղէքսանդրիոյ մէջ, ուրկէ տարածուեցաւ Իտալիա, Գաղղիա եւ Սպանիա եւ մշակութեան ու ճարտարարուեստի կարեւոր ճիւղ մը եղաւ: Սպանիոյ Քարթակէն, Սէթապիս, Թառակոնա քաղաքներուն մէջ գործածուած Քաուպոս անուն քթանը խիստ յարգի էր: Պլինիոս կ'ըսէ թէ մինչեւ 350 ամենանուրբ թելերէ խիստ բարակ դերձան մը կը շինէին եւ անով կը գործէին պաքիսքի կամ կաղի նրբութեամբ սքանչելի կտաւներ, որոնց Tissus de vent կ'ըսէին այն ատենի բանաստեղծք: Այժմ քթանը կը մշակուի ամբողջ Եւրոպայի, մանաւանդ Ռուսիոյ մէջ ինչպէս նաեւ Ալժերիոյ, արեւելեան Հնդկաստանի, հիւսիսային Ամերիկայի, Պրագիլիոյ եւ Աւստրալիոյ մէջ: Քթանի մշակութիւնն յաջողցնելու համար պէտք է որ հողը թարմ, կակուղ, խորունկ եւ քիչ խոնաւ ըլլայ: Հողը քանի մը անգամ հերկելու, գէշ խոտերն հանելու եւ սերմը ցանելով վրան կամաց մը ծածկելու է: Սերմը թէ՛ գարնան թէ՛ աշնան մէջ կը ցանուի: Աշնան ցանուածը շատ հունտ կուտայ: Նուրբ եւ երկայն թելեր ստանալու համար սերմնացանի յարմարագոյն ժամանակն է Փետրուարի վերջէն մինչեւ Ապրիլի կէսը: Թէեւ մէկ արտաժարի համար 70-80 տրամ սերմ կը բաւէ, բայց մինչեւ 120 տրամ կը ցանեն, որովհետեւ քթանին թելերը շատ նուրբ են: Եւրոպայի մէջ ամէնէն աւելի գործածուած սերմերն են Ռուսական Ռիկա կոչուած տեսակը, որ շատ անգամ տեղական սերմերու հետ խառն ցանուելով լաւ արդիւնք կուտայ: Այս խառնուրդ սերմէն առաջ եկած տունկին ճիւղերը քիչ, կոթերը բարձր եւ թելերը նուրբ կ'ըլլան: Անգլիացիք ու Ամերիկացիք սերմին հետ sel marin կը ցանեն, իսկ Եւրոպայի մէջ բնական աղբէն զատ կը գործածեն նաեւ հետեւեալ արհեստական աղբերը.

— Nitrate de potasse, nitrate de soude, superphosphate, sulfate de magnésie, carbonate de chaux, sels ammoniacaux: Բթանի տունկը 1-1½ կանգուն կը բարձրանայ: Երկայն, գծաւոր եւ նուրբ տերեւներ ու ճերմակ, կարմիր, դեղին, կապոյտ ծաղիկներ կուտայ: Տունկին կոթերն ընդհանրապէս Յուլիսի մէջ դեղին գոյն մը առնել կ'սկսին: Այն ատեն տունկն արմատով մէկտեղ հողէն կը հանեն ու չորնալու համար 8 օր բաց օդին մէջ կը տարածեն իրարմէ հեռու: Յետոյ կապոցներ շինելով կը տանին գործատուն ուր կարգ մը երկաթէ սրածայր գաւազաններ շարուած են: Բթանին կապոցները մի առ մի այս գաւազաններուն զարնելով հունտերը կը գատեն կոթերէն: Կոթերուն մէջի թելերն իրարմէ գատելու համար, 15 օրի չափ, անշարժ ջրոյ մէջ կամ, քանի մը օր, վազող ջուրի մէջ կը ձգեն եւ ապա բաց օդին մէջ տարածելով կը չորցնեն եւ կամ ուղղակի կը չորցնեն առանց թրջելու: Բթանը վանաղան գոյներ կ'առնէ այս գործողութեանց համաձայն: Առաջին պարագային բաց կամ դեղնակեղ գոյն մը կ'առնէ, երկրորդ պարագային՝ կապարի կամ մութ գոյն եւ երրորդ պարագային՝ գորշ կամ կարմիր գոյն: Այսպէս լաւ մը չորցած կոթերը կը տանին յատուկ գործիքի մը մօտ եւ անոր ակօսաւոր դլաններուն միջոցաւ կը ճզմեն, որպէս զի կեղեւը պատուի ու թելերն երեւան գան: Յետոյ նորէն կը զարնեն գաւազաններուն, եւ այս կերպով դուրս կը հանեն կոթերուն մէջ գտնուած փայտը, յարդն եւ ուրիշ օտար նիւթեր: Թելերն այլեւս մանելի վիճակ մը կ'առնեն: Եթէ չափազանց չորութիւն, փոթորկախառն անձրեւ կամ տունկի հիւանդութիւն մը չի պատահի, քթանի մշակութիւնը շատ շահաւոր գործ է: Մէկ արտավարէն մինչեւ 25-30 սսկւոյ արժողութեամբ մանելի քթան կ'արտադրուի:

Ա. Գ.

(Շարունակելի)

Պ Ա Ն Ք Ա

Բ.

ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՊԱՆՔԱՆԵՐՈՒ

Աշխատութեան բաժանումը պանքաներու վրայ ալ ունեցած է իր ազդեցութիւնը, ինչպէս ուրիշ ամէն ձեռնարկութիւններու վրայ: Այս ազդեցութիւնը զգալի եղած է մանաւանդ առեւտրական մեծ կեդրոններու մէջ ուր ամէն տեսակ գործողութիւնք կը համախմբուին, կը կիցրոնանան: Առաջ, թանկագին մետաղներու վաճառականութիւնը յատուկ հաստատութիւններու կողմէ կը կատարուէր: Զեղչի ու գանձման գործողութիւններն ալ կարգ մը տուններու մասնագիտութիւնն եղած էին գրէթէ: Իսկ շահադիտութեան պանքաներն առանձին դասակարգ մը կը կազմէին: Այսօր ընդհանուր միտում մը կայ գործողութիւնները կեդրոնացնելու: Այս մասին իբր օրինակ կարելի է յիշել այն շարժումը, որ կը կատարուի ի Ֆրանսա, վարկի մեծ ընկերութիւններու ազդեցութեամբ որք իրենց ձեռք կը կեդրոնացնեն ո՛չ միայն ամէն դասակարգի պանքաներու ընթացիկ գործողութիւնները, այլ նաեւ թանկագին մետաղներու գնումն ու վաճառումը, եւ նոյն իսկ շահադիտութեան պանքայի գործողութիւնները: Այս շարժումը տակաւ կը դիտուի նաեւ ի Լոնտոն, ուր աշխատութեան բաժանումը կատարելագործեալ վիճակ մ'առնի: Լրնսքն ճօյնը սղօս պակները աւանդի պանքաներ են, որոց յաճախորդները գլխաւորապէս Լոնտոնի մեծ վաճառականներն են: Լրնսքն բրիվեյդ պակները վարկի տուներ են որք դրամ կուտան արժեթուղթերու վրայ: Այս պանքաներ, որոց ծագումը շատ հին է, երկար ատեն դրամատուն հանեցին որ Անգլիոյ Պանքային թուղթերուն պէս դիւրութեամբ կը շրջաբերէր: Բայց աւելի քան

մէկ դարէ ի վեր դադրած են դրամատուն հանելէ, զեղջե-
լով այսպէս յարակից ծախքերը շրջաբերութեան մը, զոր
Անգլիոյ Պանքան անօգուտ կը դարձնէր այլ եւս: Կան նաև
Պիլ-պրօֆրանսեր կամ զեղջի միջնորդներ որք երկու դասա-
կարգի կը բաժնուին. 1. — Անոնք որ Անգլիոյ մէջ վճարելի
թուղթ կը գնեն և 2. — Անոնք որ փոխանակագիր կը
յանձնեն օտար երկրի մէջ վճարելի: Առաջիններն ընդհան-
րապէս Պիլ-սիլբրս կը կոչուին: Լոնտոնի մէջ կան նաև շա-
հադիտութեան պանքաներ որք մեծ փոխատուութիւններ
կ'ընեն կառավարութիւններու: Փրանսայի մէջ մասնագիտա-
կան պանքաներն հետզհետէ կը նուազին: Դրամներու փո-
խանակութիւնն իսկ, որ միշտ անջատ ճիւղ մը կազմած էր,
և շահադիտութիւնն հետզհետէ մեծ — նոյն իսկ իրստ մեծ —
տեղ մը կը գրաւեն սեղանաւորական մեծ ընկերութիւննե-
րու ընթացիկ գործողութիւններուն մէջ: Այս հաստատու-
թիւնք, որոց նպատակն է իրենց և օտար երկիրներու մէջ
հաստատուած իրենց բազմաթիւ մասնաճիւղերուն ձեռքին
մէջ կեդրոնացնել վերը նշանակուած բոլոր գործողութիւն-
ները, պէտք է ուրեմն նկատել իբր տեսակ մը խառն պան-
քաներ: Յատկապէս աւանդի վրայ գործ ընող պանքաները
շատ տարածուած չեն Փրանսայի և Անգլիոյ մէջ, սակայն
վարկի մեծ հաստատութիւնք հիմակ առաջուրնէ շատ աւելի
ընդարձակած են այս կարգի գործողութիւնները: Պէտք է
վերջապէս բսել թէ կալուածի վրայ փոխատուութիւն ընող
հաստատութիւններն ալ իրենց նեղ սահմանին մէջ չեն պար-
փակուիր այժմ: Բայց մենք պարտաւոր ենք կարելի եղածին
չափ պարզ դասակարգութիւն մ'ընել. յստակ ուսումնասի-
րութիւն մը ներկայացնելու համար: 1. — Ուրեմն իբր զուտ
Առեւտրական պանքա կը նկատենք անոնք որք հաշիւներու
փոխանցում (virement de comptes), զեղջ, փոխանակու-
թիւն, գանձում կ'ընեն և վարկագիր կը ծախեն եւն. 2. —
Շրջաբերութեան պանքաները թէեւ շատ կը նմանին բուն
առեւտրական պանքաներուն, բայց մասնաւոր նկարագիր
մ'ունին զիրենք վարող օրէնքներուն համար: Վերջապէս
3. — Շահագիսութեան պանքաները, որք առեւտրական պան-
քաներէն բոլորովին կը տարբերին իրենց կատարած գոր-
ծողութիւններուն բնութիւնովը: (Շարունակելի)

Վենետկեան

Վաճառականութիւնը

[Ժ. — ԺԵ. Դար]

Վենետիկ, «Ադրիական ծովու թագուհին», հիմա Իտա-
լիոյ չորրորդ վաճառաշահ քաղաքն է, 135,000 բնակչով,
Միջին դարուն աննշան քաղաք մ'էր Բաւենայի Վեցերրորդ-
դաստուութեան — էկզարքութեան մէջ, որ Բիւզանդեան
կայսրութեան կը պատկանէր: Քաղքին վարիչը, Դուքս ==
Տօփ, Բիւզանդական նուիրապետութեան մէկ աստիճանաւոր
պաշտօնատարն էր, և կը կրէր «հիւպատոս փառաւոր» տիտ-
ղոսը, կամ կը կոչուէր Պրոսոպաքե, Պրոսոբբասոս: Վե-
նետիկ հետզհետէ զօրացաւ եւ իտալական միւս քաղաքնե-
րու ներքին խռովութիւններէն զերծ մնալով բարգաւաճե-
ցաւ ամէն կերպով: Ժ. դարուն կարգադրութիւն մը կնքեց
Բիւզանդիոնի հետ որ խոստացաւ վենետկեան վաճառակա-
նութիւնը պաշտպանել ու քաջալերել իր մեծափարթամ քա-
ղաքներուն մէջ: Անյազ վենետիկցիներն այսչափով գոհ
չեղան եւ առեւտրական նոր առանձնաշնորհումներ ուզեցին
եւ ստացան, իրենց վաճառականութիւնը դարգացնելու հա-
մար: Բիւզանդիոնի մէջ յատուկ թաղ մը շնորհուեցաւ իրենց
(1089), Սկալայով == քարափ: (Թուրքերէն Իսկիլին այդ
բառէն ձայնաշրջուած է), Վենետիկցիք եկեղեցի մը հիմ-
նեցին իրենց թաղին մէջ, ուր բազմաթիւ կղերականներ
կային, կղերիկոսէն մինչեւ արքեպիսկոպոս: Գաղութին
պեան արդի դեսպաններուն եւ հիւպատոսներուն պաշտօնը
կը վարէր: Հետզհետէ ուրիշ Սկալաներ ալ ձեռք ձգեցին
վաճառաշահ եւ ճարտարարուեստ քաղաքներու մէջ: Յով-
հաննէս Կոմենենոս փորձեց սանձել երես առած այդ վենե-
տիկցիները: Անոնց առանձնաշնորհումները չ'ընջեց եւ սկալա-

ները քանդեց, բայց ի վերջոյ նորէն բարեկամական կարգադրութիւն մը կնքեց սկալաները վերաշինելու պայմանաւ: Յովհաննէս Կոմնենոսի որդին՝ Մանուէլ Կոմնենոս՝ Պիզացիներուն եւ Ճենովացիներուն ալ մէյմէկ թաղ ու սկալա տըւաւ մայրաքաղաքին եւ ուրիշ նաւահանգիստներու մէջ, ի հարկին անոնց օժանդակութիւնը ստանալու յուսով: Պիզացիներն ու Ճենովացիները 4⁰/₁₀ մաքս կը վճարէին, մինչ Վենետիկցիները զերծ էին մաքս վճարելէ: Միջերկրական ծովը նորէն իր նախկին ոգեւորութիւնը գտաւ: Վենետիկ, Ճենովա, Պիզա ո՛չ միայն Միջերկրական ծովով կը հաղորդակցէին Բիւզանդիոնի ու Պաղեստինի հետ, այլ եւ Արեւելքի վաճառքները Բիւզանդիոնի հրապարակը կը փոխադրէին: Վենետիկի այն ատենուան նշանաւոր սկալաներն էին Արքիպէղագոսի եւ Յոնիական ծովու կղզիներուն վաճառահան քաղաքները, Սեւ ծովու հիւսիսային եզերքը, Տնիէբէրի գետաբերանը, Ազախու ծովեզերքը: Ատոնք այն քաղաքներն էին ուր Վենետիկցիք առուտուր կ'ընէին հարաւային Ռուսաստանի, Կովկասի, ու Կասպից ծովու երկիրներուն ընկալաց, ինչպէս նաեւ Հայոց ու Պարսից հետ: Հարաւային Եւրոպիոյ ծովեզերեայ քաղաքներ ալ, Վենետիկցիներուն վաճառականութեան շնորհիւ, բարգաւաճ վիճակ մ'ունեցան: Արեւելքի ապրանքներն անոնց ձեռքով կ'ստանային: Միջերկրական ծովը մեծ մասամբ Վենետիկեան նաւերով ծածկուած էր: Աղէքսանդրիա, ուր Վենետիկցիք սկալա ունէին, շտեմարանն էր Հնդկաստանի համեմնեբուն ու մարմաշներուն, նաեւ հարուէի, քափուրի, լեղակի, արաբական խնկեղէններու, Ասորիքի ու Չինաստանի մետաքսներուն, Փոքր Ասիոյ ու Պարսկաստանի դորգերուն, Եգիպտոսի բամբակեղէններուն, Դամասկոսի ու Տիւրոսի ապակեղէններուն, ճենական յախճապակիի, Սէյլանի մարգարիտներուն եւ Ափրիկէի փղատամնեբուն: Արեւմուտք մեծ մասամբ Վենետիկցիներուն միջոցաւ կ'ստանար այդ ապրանքներն եւ դէպ Արեւելք կ'արտածէր Իտալիոյ, Լանկատոքի ու մանաւանդ Ֆրանսիոյ ասուեղէնները, նաեւ ռազմանիւթ, գինի ու ձէթ: Վենետիկցիներն ու Ճենովացիներն

աղտոտ, գծամենելի վաճառականութիւն մ'ալ կը կատարէին ծայրայեղ չարաչափութեամբ, այն է Գերնվաճառուրիւնը: Սեւ ծովու եզերքէն կը գնէին երիտասարդներ եւ ուհիներ ու Եգիպտոսի եւ Իտալիոյ ընչեղ դասակարգին կը ծախէին: Եւրոպայի ու Ասիոյ մէջ, բացի Ճենովայէն, չկար քաղաք մը, որ Վենետիկի մեծափարթամութեան հաւասարէր:

Ժե. դարուն վերջերը, իտալական քաղաքներուն մէկ մասը Վենետիկեան հասարակապետութեան տակ ինկաւ: Այն ատեն Իտալիոյ մէջ հինգ տէրութիւն կար, որոց է՛ն զօրաւորն էր Վենետիկ: Ատիճէ գետէն մինչեւ Ատտա՝ իտալական երկիրները Վենետիկի կը պատկանէին: Ճենովա ինկած էր: Սափուայի դքսութիւնն հետզհետէ կը զօրանար ու կ'ընդարձակուէր դէպի ճենովական երկիրները: Քիչ մը ետքն ալ Վենետիկ իր նախկին պայծառութիւնն ու զօրութիւնը կորսնցուց եւ հպատակեցաւ Սպանիոյ Կարոլոս Ե.ի: Հետզհետէ կորսնցուց իր գաղութներն եւ առեւտրական առաւելութիւնները:

Հ Ա Շ ՈՒ Ա Կ Ա Ն

5 թօնօ, 12 քինթալ, 3 քուօրդըր և 20 լիպրային 3 ⁰/₁₀ը զեղջել. —

1 թօնօ	= 20 քին.	= 80 քուօր	= լիպ.	2240	= քիլօ	1016,
1	»	= 4	»	= 112	= 50,80	
	1	»	= 28	= 12, 7		
			»	1 = 16 ունկի	= 453 կը.	
				1	»	= 28

Ա. Չեւ. — Ամէնքը մէկ լիպրայի վերածել եւ 3 ⁰/₁₀ը աունել. —

թօնօ	5 × 2240	= լիպրա	11200
քինթալ	12 × 112	= 1344	
քուօրդըր	3 × 28	= 84	
Լիպրա	20	= 20	
		Լիպրա	12648

12648 × 3%₆ = Լիպրա 379.44 = 3 քինթալ 1 քուորդր 15 1/2
 Լիպրա :

Կշիռ	5, 12, 3, 20
Ձեղջ	0, 3, 1, 15 1/2
	5, 9, 2, 4 1/2

Բ. Ձեւ. — Կշիռը Յով բազմապատկել եւ յետոյ գտնը-
 ւած թիւերուն հարիւրորդը գտնել միութիւն առ միու-
 թիւն :

Թօնօ	Գինքալ	Քուորդր	Լիպրա
5	12	3	20
		×	3
15	36	9	60


	Կամ	
Թօնօ	0	16 18 3 4
	×	20
		320
	+	18
Գինքալ	3	38
	×	4
		152
	+	3
Քուորդր	1	55
	×	28
		440
	×	110
Լիպրա	15	40
	+	4
		44

Յով բազմապատկեցինք եւ գտանք 15 — 36 — 9 — 60
 Կամ որ նոյն է 16 — 18 — 3 — 4.

16 թօնօյին հարիւրերորդն է 0 թօնօ. Կը մնայ 16,
 զոր քինթալի վերածեցինք 20 ով բազմապատկելով: Գտանք
 320 եւ վրան աւելցուցինք 18 քինթալը = 338, որուն հա-
 րիւրերորդն է 3, Կը մնայ 38 քինթալ, զու քուորդրի վե-
 րածեցինք... եւլն, եւ գտանք միեւնոյն արգիւնքը: Այս
 ձեւ առաջինէն նախամեծար կը համարուի:

Ն Մ Ո Յ Հ Ն Ե Ր

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐՈՒ



Le fournisseur menace son client de poursuites judiciaires

Birmingham, le 12 Avril 1901

Monsieur,

Six semaines de plus se sont écoulées, sans que vous ayez jugé à propos de me rien faire dire au sujet de ma dernière note de fournitures montant à la somme de £ 300. Je ne sais en vérité comment interpréter votre silence à l'égard d'une si juste réclamation, mais je ne saurais attendre plus longtemps qu'il y soit fait droit. Je viens donc vous prévenir que si d'ici à huit jours je ne suis pas soldé, je chargerai un homme de loi du recouvrement de ma créance.

J'ai l'honneur de vous saluer

S. H.



The tradesman threatens with legal proceedings

Birmingham 12th April 1901

Sir,

You have allowed another six weeks to pass without thinking proper to answer me on the subject of my last account amounting to £ 300. I am puzzled to understand your silence in respect of so just a claim, and I can wait no longer without taking measures to enforce my rights. I therefore beg to inform you that if within a week from this date, I am not paid, I shall place the matter in the hands of my solicitor to obtain recovery of the amount.

Yours truly

S. H.

ՍՆԱՆԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Բ .

Անգլիոյ մէջ այսօր սնանկութիւնն անմիջապէս չի վճռու-
 ւիր: Ատեանը նախ գրաւի տակ կ'առնէ (receiving order)
 պարտականին գոյքերը, անոնց վրայ հսկող կարգելով հան-
 րային պաշտօնատար մը (official receiver): Յետոյ այդ
 պարտականն հարցաքննութեան կ'ենթարկէ անոր գործը
 վտանգող պատճառները լուսարանելու համար: Ի վերջոյ կը
 գումարէ ժողով մը (meeting) որ foiforsադոյի մը պատրաս-
 տութեան վրայ կը խորհրդակցի: Քօնֆօրսադօն (composition
 or scheme of arrangement) կ'որոշուի պարտքին Յլը ներ-
 կայացնող քուէարկուներու ձայնով: Այս կարգադրութիւն
 դատարանին կողմէ վաւերացուելէ ետք, պարտականն իրա-
 ւունք կունենայ իր գոյքին տէրն ըլլալու: Իսկ եթէ պա-
 հանջատեարք մերժեն foiforsադօն ստորագրել, ատեանն
 իր նախորդ վճիռը կը ջնջէ եւ սնանկութիւն կը վճռէ (order
 of bankruptcy): Սինտիքը (trustee) պարտապահանջներուն
 կողմէ կ'ընտրուի:

Այս համառօտ տեղեկութիւններ ցոյց կուտան թէ վա-
 ճառականը՝ վճարումները դադրեցուցած ըլլալուն հա-
 մար՝ սնանկութեան բոլոր խտտութիւններուն չենթարկուիր,
 այլ կրնայ ազատիլ անկէ, պահանջատէրերուն հետ համա-
 ձայնութեան գալով կամ դատական հաշուեյարդարութիւն,
 վճարմանց յետաձգում եւլն. ձեռք բերելով:

Գ .

Սնանկութեան վճիռը կուտայ պարտականին բնական
 տեղոյն Առեւտրական դատարանը: Գերմանիոյ մէջ նահան-
 գային դատաւորին (amtsrichter) տրուած է այս իրաւունք:

Առեւտրական դատարանը սնանկութիւն կը վճռէ երեք տար-
 րեր պարագաներու մէջ 1. — Երբ պարտականն իր պիլան-
 չօն յանձնէ, որ սնանկութեան պահանջում ըսել է, 2. —
 Երբ առնելիքը որնէն մէկուն կամ մի քանիին կողմէ պա-
 հանջուի կամ 3. — Դատարանն ինք ի պաշտօնէ սնանկու-
 թիւն կը վճռէ:

Պիլանչօն յանձնելով սնանկութիւն պահանջելը շատ հազ-
 ուադէպ եղած է 1889էն ի վեր: Պարտականն աւելի նա-
 խամեծար կը սեպէ դատական հաշուեյարդարութիւնը, որ
 օրինական նուազ խիստ տրամադրութիւններու կ'ենթարկէ
 զինք: Ի պաշտօնէ սնանկութիւն վճռելն ընդունուած չէ ամէն
 օրէնսդրութիւններու մէջ: Մասնաւորապէս Անգլիոյ և Գեր-
 մանիոյ առեւտրական դատարանք այն ատեն միայն կրնան
 վճիռ տալ երբ շահակիցներուն կողմէ պահանջում ըլլայ:
 Առնելիքը որնէն պահանջման վրայ սնանկութիւն վճռուիլն
 ամէնէն յաճախադէպն է: Պարտականի մը սնանկութիւնը
 պահանջողն ամէնէն առաջ պէտք է ապացուցանէ անոր վա-
 ճառական ըլլալը, ինչպէս արդէն այս էջերուն մէջ բացատ-
 րած էր հանրածանօթ փաստաբան Տիրան էֆ. Երկանեան:
 Պարտականի մը վաճառական ըլլալն ապացուցանելը ցոյց տալ
 չէ միայն որ անոր գործաւնութիւններէն մի քանին առեւ-
 տրական բնութիւն ունին: Պահանջումը կը մերժուի եթէ ու-
 ըրչապէս չհաստատուի թէ պարտականին ի գործ դրած ար-
 հեստն անոնցմէ է զոր օրէնքը դասակարգած է Առեւտրական
 Օրինագրքին մէջ: Սակայն բացարձակապէս չի պահանջուիր
 որ պարտականն անպատճառ իր արհեստն ի գործ դնէ այն
 պահուն երբ իր սնանկութիւնը կը պահանջուի, եթէ վըճա-
 րումները դադրեցուցած վիճակի մէջ մեռնի, իր սնանկու-
 թիւնը կրնայ պահանջուիլ առնելիքը որնէն կողմէ կամ ի
 պաշտօնէ կը վճռուի մահուան պատահած տարւոյն ընթաց-
 քին մէջ: 1889էն ի վեր ժառանգորդք ալ կրնան դատական
 հաշուեյարդարութիւն պահանջել վաճառականին մեռած ամ-
 սուն: Օրէնքը կ'ընդունի սնանկութեան վճիռ տալ նաեւ այն
 պարագային երբ վաճառականը գործէ քաջուած է պարտ-
 քերը չտուած, այսինքն բաւական է որ վճարմանց դադա-

րումը գոյութիւն ունենայ այդ թուականին : Վճարմանց դա-
դարումն հաստատելու բնութիւն ունեցող իրողութիւնները
դատարանին գնահատութեան թողուած են : Ամէն պարա-
գայի մէջ էականն այն է որ վաճառականը կատարած չը-
լայ իր այն յանձնառութիւններ որք ուղղակի վաճառատան
կը վերաբերին : Ուրիշ անձնական կամ տնական պարտքե-
րուն անվճար մնալը նկատողութեան չառնուիր : Սովորաբար
սնանկութիւն կը վճուուի մուրհակներու բրօդիսոյի վրայ :
Բայց կան նաեւ ուրիշ պարագաներ, — ինչպէս երբ պարտա-
կանն իր վաճառատունն ուրիշին ծախէ գործերը չկարգա-
դրած կամ կնքէ բարեկամական forforsuqo մը որուն մաս-
նակցած չեն կամ չեն ուղած մասնակցիլ քանի մը պահան-
ջատէրեր, — այս պարագաներն ալ դատաւորներուն կողմէ
կրնան իբր ապացոյց նկատուիլ վաճառականին անկարողու-
թեան՝ իր պարտքերն հատուցանելու : Բայց ցորչափ
պարտականը կը շարունակէ իր վճարումը, թէեւ արհեստա-
կան միջոցներով, ինչպէս fawetuf fawetuf թուղթերով են, կա-
րելի չէ անոր սնանկութիւնը պահանջել : Պահանջողն ի դուր
պիտի ապացուցանէ թէ վաճառականն իր կացութիւնը կ'եր-
կարէ այնպիսի միջոցներով որք կեղծ վարկ մը կուտան իրեն :
Ընդհակառակը պարտականն իրաւունք չունի սնանկութեան
պահանջումի մը դէմ առարկութիւն յարուցանել, ըսելով թէ
այսինչին կամ այնինչին պահանջքները վճարած է և թէ իր
տրամադրելի գոյքով կրնայ իր բոլոր պարտքը գոցել աւելի
կամ նուազ երկար ժամանակամիջոցի մը մէջ :



գործութիւնը շատ յառաջացած է 1878էն ի վեր : Զիթենիի
մշակութիւնը տարեկան միջին հաշուով 33-34 միլիոն քիլո-
կրամ ձիթապտուղ և 490,000 հարիւրալիտր ձէթ կ'արտագրէ :
Հարաւային Եւրոպայի գրէթէ բոլոր պտղատու ծառերը կան
Ալժէրիոյ մէջ : Ամէնէն աւելի յաջողած են նարնջենին,
մանտարենին, լեմոնի ծառը, նշենին, թզենին, արմաւե-
նին : Ալժէրիա շատ չոր երկիր մը ըլլալով նպաստաւոր պայ-
մաններ չունի դուարաբուծութեան համար : Եգներն ու կո-
վերը (1,121,000 հատ) թէ՛ մսի, թէ՛ աշխատութեան կողմէ
միջակ են : Երկրին ճշմարիտ հարստութիւնը ոչխարն է,
7,700,000 հատ : Զիարուծութիւնն անկեալ վիճակ մ'ունի : Ալ-
ժէրիոյ մէջ կան 216,000 ձի, 142,000 ջորի, 287,000 էշ,
255,000 ուղտ և 3,545,000 այծ : Տարին 65 միլիոն արժէ-
քով բուրդ, մորթ եւայլն կ'արտածուի : Անտառներն 3 մի-
լիոն հէքդար հող զբաւած են : Ծառերու գլխաւոր տեսակ-
ներն են շոճի (չամ ազաճը), կաղնի, մայրի (սէրլի) :
2,500,000 հէքդարը կառավարութեան և 480,000ը մասնա-
ւորներու կը պատկանի : Անտառներու մէջ շատ հրդեհ կը
պատահի, յաճախ կամաւոր : Կառավարութիւնը մտադիր է
անտառային մասնաւոր օրէնք մը հաստատել, տեղային սո-
վորութիւններու և բնիկներու պիտոյից աւելի յարմար քան
1827ի այն օրէնքը որ այժմ կը գործադրուի : Ալժէրիա ունի
երկաթի, պղինձի, կապարի, արծաթախառն կապարի, զին-
կոյի, ծարրաքարի հանքեր, որոց շահագործութեան կ'աշ-
խատին 2040 գործաւորներ եւ տարին 393,000 թօնօ կ'ար-
տադրեն 3¹/₂ միլիոն ֆր. արժէքով : Ամէնէն կարեւորներն
են Աին-Մօքրայի եւ Պէնի-Սաֆի երկաթի հանքերը, կը
շահագործուին նաև մարմարի, որձաքարի, գաճի եւ աղի
հանքեր : Տահրայի մէջ կան քարիւղի աղբիւրներ եւ Պօկա-
րի մէջ՝ կիրի լուսածնատի (phosphate de chaux) երակներ :
Ծովեզերքին վրայ հաստատուած են պահածոյ ձուկերու գոր-
ծարաններ, 2100 նաւ եւ 4000 հոգի կը պարապին ձկնոր-
սութեամբ : Խաղախորդութիւնը երկրին մէջ կը գտնէ իրեն
պէտք եղած նախնական նիւթը : Տարին 10 միլիոն ֆրանքի
ծխախոտ կ'արտածուի : Ալժէրիոյ մէջ կան ալքոլի դտարան-

ներ, ոգելից ըմպելիներու գործարաններ, հիւսարաններ, կերմարաններ (սագ Կորկիւսի Ֆապրիքսար) : 10,000 հոգի կ'աշխատին բնիկ գորգերու եւ հիւսուածոներու շինութեան : Ամէն քաղաքի մէջ կան զգեստի, կահերու, մեքենական շինութիւններու եւայլն գործարաններ : Այսու հանդերձ Ալ-ժէրիա՝ իր ամբողջութեան մէջ՝ ճարտարագործ երկիր մը չէ տակաւին : Ֆրանսայի և Ալժէրիոյ միջեւ 1851ին միայն հաստատուեցաւ մաքսային միութիւնը : Մինչեւ 1884 Ալժէրիա կրցաւ խիստ զեղչեալ տուրքերով ներածել օտար վաճառքներու մեծ մասն եւ առանց տուրքի՝ երկրագործութեան յատուկ մեքենաներն ու գործիքները : 1884 Դեկտեմբեր 29ի ելմտական օրէնքը մաքսային նոյնութիւն հաստատեց, բաց ի ծխախոտէն, որ մասնաւոր սակագնի մը ենթարկուած է, և շաքարէն : Բացառութիւն եղած է միայն Թունուզէն, Մարոքէն եւ հարաւային սահմանագլխէն եկած ապրանքներուն համար : Ֆրանս. ապրանքները, բաց ի շաքարէն, ազատ մուտք ունին յԱլժէրիա եւ փոխադարձաբար ալժէրիական արտադրութիւններն ալ նոյն առաւելութիւնը կը վայելեն ծխախոտէն զատ : Ինչ ինչ ապրանքներ, մասնաւորապէս պլքոլն ու գարեջուրը, Ալժէրիա ներածուած ատեննին, մաքսատուրքէ զատ կը վճարեն նաև ծովային տուրք մը, որուն արդիւնքը կը բաժնուի համայնքներու միջեւ :

Արտաքին վաճառականութիւն. — Ալժէրիոյ արտաքին վաճառականութիւնը, որ գրէթէ միմիայն ծովու ճամբով կ'ըլլայ, յարատեւ աճում մը ունեցած է :

1895ին ներածած է 266 միլիոն ֆր.ի ապրանք եւ արտածած է 334 միլիոնի : Ներածեալ գլխաւոր ապրանքներն են բամբակէ հիւսուածոներ, 32 միլիոն ֆր. արծէքով, բրդեղէն՝ 9 միլիոն, ճերմակեղէն՝ 13 միլիոն, խահուէ՝ 10 միլիոն, ողջ կենդանի՝ 11 միլիոն, մետաղեղէն՝ 9 միլիոն, մորթէ եւ կաշիէ գործուածքներ՝ 8 միլիոն, հանքածուխ՝ 6¹/₂ միլիոն, կարասի՝ 6¹/₂ միլիոն, շաքար՝ 6 միլիոն, ուտեստի իւղ՝ 4 միլիոն, մեքենայ՝ 5 միլիոն, ծխախոտ եւ ծխախոտի տեքրեւ՝ 5 միլիոն եւլն : Արտածումներու մէջ կը գրանուին գինի 88 միլիոն ֆր. արծէքով, արմտիք՝ 55 միլիոն,

արջառ՝ 64 միլիոն, ծխախոտ՝ 14 միլիոն, լարատունկ (ուրկէ չուան կը շինուի) 7 միլիոն, մարթեղէն՝ 10 միլիոն, բուրդ՝ 6 միլիոն, բամպակէ հիւսուածոյ՝ 9 միլիոն եւլն : Հնգամեայ ժամանակամիջոցի մը մէջ (1891-96) Ալժէրիոյ եւ Ֆրանսայի միջեւ կատարուած գործառնութիւններու տարեկան միջին թիւն եղած է 405,447,000 ֆրանք, այսինքն Ալժէրիոյ ընդհանուր վաճառականութեան հարիւրին 80ը : Ալժէրիա Ֆրանսայի յաճախորդներուն մէջ հինգերորդ կարգը կը գրաւէ, Անգլիայէ, Պելժիայէ, Գերմանիայէ եւ Մ. Նահանգներէն ետք : Ուրիշ երկիրներու հետ Ալժէրիոյ ըրած առևտուրին գումարը կը հասնի 100 միլիոն ֆրանքի, որուն 22 միլիոնն Անգլիոյ հետ, 8 կամ 9 միլիոնը՝ Թունուզի հետ, նոյն չափ մը՝ Մարոքի հետ, 8 միլիոն՝ Սպանիոյ հետ, 6 միլիոն անգլիական Հնդկաստանի հետ, 4 միլիոն Իտալիոյ հետ, 4 միլիոն Պելժիոյ հետ եւլն :

Վարկ. — Ալժէրիոյ պանքան, որ 1851ին հաստատուեցաւ, արտօնութիւն ունի դրամատոմս հանելու, աւանդներ ընդունելու, արժեթուղթերու վրայ փոխատուութիւն ընելու եւ առևտրական թուղթեր զեղչելու : Մասնաճիւղեր ունի Օրանի, Դէմսէնի, Բոսդանդիի, Ֆիլիքսիլի եւ Պոնի մէջ : Դրամագլուխը, որ նախապէս 3 միլիոն ֆրանք էր, 20 միլիոնի բարձրացաւ ապա : Զեղչի սակը 5% է : Երջարբութեան հանելիք դրամատոմսներուն սահմանը 18 միլիոնէն 42ի բարձրացաւ : 1894-95ին զեղչած է 343,349 թուղթեր, 439,499,120 ֆրանք արծէքով : Ալժէրիոյ պանքան դժուար չըջան մը կ'անցընէ հիմայ կալուածներու վրայ ըրած փոխատուութիւններուն հետեւանքով, որք իր դրամագլխին մէկ մասն անշարժ վիճակի մը մէջ դրած են : Ստիպուած է կառավարութենէն փոխ դրամ առնել, որուն համար 3% տոկոս կը վճարէ : Ալժէրիոյ միւս սեղանաւորական հաստատութիւններն են. 1. Երկրագործական եւ կայուածական վարկի պանքան, որ գրաւով փոխատուութիւններ կ'ընէ եւ պանքայի ուրիշ գործողութիւններով կ'զբաղի : Զեղչի սակը մասնաւորներու եղած փոխատուութիւններու համար 5-7% : 2. Ալժէրիական Բնկեռութիւն որ թուղթեր կը զե

ղեր կը շահագործէ: 3. Գրեթի Ալժերիէն, որ քաղաքապետութեանց եւ Երկաթուղւոյ ընկերութեանց փոխառութիւններով կ'ըզարդի եւ կը շահագործէ իր ունեցած մի քանի անշարժ կալուածները: 4. Գրեթի Լիօնէ մասնաճիւղ ունի Ալժէի եւ Օրանի մէջ: 1896ին զեղջած է աւելի քան 246,000 թուղթ, 115 միլիոն ֆրանք արժէքով: Այս մեծ հաստատութիւններէն զատ Ալժէրիոյ մէջ կան 23 հատ տեղական զեղչի պանքաներ եւ 2 Երկրագործական Մնտուկներ, որք թուղթ կը զեղչեն եւ գրաւի վրայ փոխատուութիւններ կ'ընեն: Անուանական դրամագլուխին է 9,025,000 ֆրանք. վճարեալ դրամագլուխին՝ 2 1/2 միլիոն ֆրանք եւ պահեստի գումարնին՝ 2,426,639 ֆրանք: Ձեղչի սակ՝ 7-8 0/0: Կան նաեւ փոխադարձ փոխատուութեան ընկերութիւններ, որք ի հարկին կ'օգնեն երկրագործներուն՝ ստակ կամ սերմ, գործիք ելն. տալով: Դրամով եղած փոխատուութեանց համար 5% տոկոս կ'առնուի, իսկ ապրանքով եղած փոխատուութիւններու համար 10 0/0: 1895ին 77 հատ կային այս ընկերութիւններէն 5,380,000 ֆրանք դրամագլխով: Այս համեստ մարմիններ մեծ ծառայութիւն մատուցին 1892, 93 եւ 96 տարիներուն, երբ երկրագործութիւնը տաղնապալից շրջան մը կ'անցընէր:

Հաղորդակցութեան նամբաներ. — Ալժէրիա ուրիշ երկիրներու հետ գրէթէ միայն ծովու ճամբով հաղորդակցելուն համար կանուխէն պէտք զգացուեցաւ նաւահանգիստներ շինելու: Այս նպատակաւ կարեւոր աշխատութիւններ եղան բայց տակաւին ամբողջացած չեն: Մախքերն80 միլիոն ֆրանք հաշուուած են: 1894ին երթեւեկած են 22 հազար 465 նաւեր 11,614,000 թօնօ տարողութեամբ եւ փոխադրած են 2 1/2 միլիոն թօնօ ապրանք: Գլխաւոր նաւահանգիստներն են՝ կարեւորութեան կարգով՝ Ալժէ (6,779 նաւ), Օրան (3406 նաւ), Պօն (2301 նաւ), Ֆիլիբիլի (2378 նաւ), Պէնի-Սաֆ (414 նաւ): Յետոյ կուգան Արզէ, Մօսդականէմ, Պուժի, Ճիւժիլի, Բօլլօ, Մէրզէլ քէպիլը, Սգօրա եւ այլն: — Հեռագրական հաղորդակցութիւնք կը կատարուին վեց ընդձովեայ հեռագրաթելերով, երկուքը Պօնի նաւահանգիստէն Մար-

սիլիա, 1ը Օրանէն Մարսիլիա եւ 3ը Ալժէէն Մարսիլիա: Այս հեռագրաթելեր տարին գրէթէ 800,000 հեռագիր կը փոխադրեն: — Ալժէրիա ունի 30,000 քիլոմէդր ճամբայ, որուն 1/3ը քարայտակ: — Երկաթուղիք, որոց շինութիւնն 1862ին սկսաւ, 2905 քիլոմէդր երկայնութիւն ունին: Շինութեան համար ծախսուած է 560 միլիոն ֆրանք, այսինքն մօտ 200,000 ֆրանք առ մէն մի քիլոմէդր:

Տնտեսական կացութիւն. — Ալժէրիոյ տնտեսական կացութիւնը գոհացուցիչ է: Վիճակագրութիւնները տարուէ տարի յարատեւ աճում մը ցոյց կուտան երկրին (հասոյթներուն մէջ): Այս տնտեսական բարգաւաճում աւելի արագ տեղի պիտի ունենայ անշուշտ եթէ փոխադրութեանց եւ վարկի պայմաններն աւելի նպաստաւոր հանգամանք մը առնեն:

Այգեգործութիւն. — Ալժէրիոյ մէջ հին տեսներէ ի վեր այգեմշակութիւն կար, որ ետքերն անկեալ վիճակ մը ունեցաւ: 1870ին 1200 հէքդար տարածութիւն մը գրաւած էին այգիները: Այսօր, այդ թիւ բարձրացած է 120,000ի: Ալժէրիա 1896ին 204 միլիոն ֆրանքի գինի արտածած է: Գըլխաւորապէս երեք այգեստաններ կան, որոց արտադրած գինիներն երեք կարգի կը բաժնուին, լեռնային, բլրային եւ դաւսային: Լեռնային գինիներն ընտիր տեսակէ են և շատ ազւոր գոյն մը ունին: Բլրայինները նշանաւոր են իրենց ախորժիկի համովը, իսկ դաւսայինները շատ ստորին տեսակէ են:

Մայրաքաղաք. — Ալժէրիոյ մայրաքաղաքն է Ալժէ, նաւահանգիստ Միջերկրականի վրայ: Բնակիչ 100,000 հոգի: Կլիման սքանչելի է, և շրջականերու գեղեցկութիւնն անբաղդատելի: Նշանաւոր յիշատակարաններն են Սիտի Ապտիւր-րահմանի գեղեցիկ մզկիթը եւ մատենադարան մը: Ունի չորս բարձրագոյն վարժարաններ եւ պատմագիտական ու գեղարուեստական ընկերութիւններ: Իբր գործի քաղաք, գինիի, արմտիքի, իւզի, արջաօրի եւ պտուղներու մթերանոց մ'է: Ալժէրիոյ Պանքային եւ Երկրագործական ու Կալուածական վարկի Պանքային կեդրոնն է: Ունի Առեւտրական Սենեակ մը, Դատարան մը և Սակարան մը:

ԱԼԻՄԻԵՆՏՈՄ. — Ամենաթեթեւ մետաղ մ'է, անագէն աւելի կարծր, բայց զինկոյէն ու պղինձէն աւելի կակուղ: Խիստ հնչուն է, դիւրաթեք ու խորտուրորդ: Դիւրաւ կը խարտուի եւ կը յղկուի, բայց անագին ու կապարին պէս կը իւզուէ խարտոցը: Երբ լաւ յղկուի, մոխրագոյն ձեւով գոյն մը կ'առնէ: Դիւրաւ կռելի է, բայց երբ շատ բարակցուի, կը ճաթըրտի: Բարակ մասերու կրնայ վերածուիլ, բայց այս ձեւին տակ դիւրաւ կը կոտրի: Առաձգական չէ: Ոսկիին ու արծաթին պէս խիստ բարակ թերթերու կրնայ վերածուիլ, բայց շատ դժուարաւ թել կը քաշուի: Բաց օդին մէջ լաւ կը պահուի եւ տաքութեան կը դիմանայ առանց ժանգոտելու, բայց վրան ալիւմինի բարակ մաշկ մը առաջ կուղայ որ հալեցնելու եւ կաղապարելու ժամանակ մետաղային մասնիկներուն միացումը կը դժուարացնէ: Ասոր համար է որ Քլօրիտ քլ Բօքսիտ կը գործածեն հալեցնելու համար: Ալիւմինիումը գրէթէ 700 ատոմական տաքութեան մէջ կը հալի: Կապարին հետ չի խառնուիր, անագին հետ կարծր ու տարածուն խառնուրդ մը կը կազմէ, իսկ պղինձին հետ խառնուելով առաջ կը բերէ ալիւմինիումի անագապղինձը որ ճիշտ ոսկիի գոյն ունի: Ալիւմինիումն 1827 ին գտնուեցաւ Վոհլէրի կողմէ, մոխրագոյն փոշիի ձեւին տակ, իսկ ալիւմինիում ստանալու արհեստական մէթոտը Սէնդ Բլէն-տը Վիլ գտաւ 1855 ին: Այժմ ալիւմինիումը կը պատրաստուի ելեկտրականութեամբ: Առաջին անգամ Պընսըն յաջողեցաւ այս կերպով ստանալ ո՛չ միայն ալիւմինիումը, այլ նաեւ մակնեզիոնը, ծանրամետաղը (baryum) եւ կրածինը (calcium): Ալիւմինիումն 1885 ին միայն մտաւ ճարտարութեան մէջ, իր թեթեւութեան եւ մաքրութեան համար շատ բաներու կը գործածուի, ինչպէս չքանչան, դրամանիչ եւայլն: Փորձեցին նաեւ գոհարեղէն շինել եւ մասնաւորապէս ոսկեայ առարկաներ գեղազարդել ալիւմինիումով, բայց այս կերպ պատրաստուած գոհարեղէնները շատ ընդունելութիւն չգտան, որովհետեւ իրենց գոյնը պէտք եղածին չափ գեղեցիկ չէ: Ալիւմինիումը կրնայ գործածուիլ դրուագներու (քարվամա) եւ ուրիշ մանր մունր առարկաներու հա-

մար, ինչպէս ծխատուփ, ապակեայ անօթներու կափարիչ, կնիք, գրչակալ, կաղամար, կոճակ, գաւազանի գլուխ, մատնոց եւ ուրիշ զարդարանքի առարկաներ: Ժամացոյցներու եւ վիրարութեան ու երաժշտական գործիքներու համար ալ ալիւմինիում կրնայ գործածուիլ, հիմակ որ քիլոն 4,50 ֆր. է մինչ 1870 ին 120—140 ֆր. էր: Ալիւմինիումի գործածութիւնն երթալով կ'ընդհանրանայ:

ԱԼՈՒՐ. — Ալիւրի վաճառականութիւնը շատ կարեւոր է, որովհետեւ ցորենի ալիւրով կը շինուի հացը, որ մարդկային սննդեան հիմը կը կազմէ: Մինչեւ անցած դարուն սկիզբը, գործառնութիւնք կը կատարուէին շատ պարզ եղանակով մը: Արտադրիչն իր ցորենը կը տանէր ջաղացպանին որ ընդհանրապէս ապրանքով վճարելի պղտիկ վարձքի մը փոխարէն ցորենը կ'աղար, ալիւր կ'ընէր եւ տիրոջը կը յանձնէր, թեփը եւ աղացումէն մնացածները վար ղնելով: Յորչափ գեղացին ինք կ'եփէր իր հացը, գործերն այս վիճակին մէջ էին: Բայց երբ քաղաքներու բնակչաց թիւն աւելցաւ, երբ երկրագործ ժողովուրդները դէպ ի ճարտարարուեստ քաղաքներ դաղթել սկսան, այս հին սովորութիւնք բոլորովին յեղաշրջեցան, կերպարանափոխ եղան: Ճարտարարուեստի յառաջդիմութիւններուն շնորհիւ հին հողմաղացները տեղի տուին կատարելագործեալ ջրաղացներու: Ալիւրի վաճառականութիւնն ստեղծուած էր, վասն զի երկրագործները, ի վիճակի ըլլալով իրենց պէտքն ամենայն դիւրութեամբ հացագործէն հոգալու, իրենց ցորենը ծախեցին ջրաղացներուն, որք սկսան ուղղակի սպառումի յանձնել իրենց արտադրութիւնը: Հողմաղացներու ջնջման եւ ջրաղացներու հաստատութեան անմիջական արդիւնքն եղաւ ալիւրի կանոնաւոր եւ մեծաքանակ արտադրութիւն մը: Բայց 1880 ին միջոցները ջրաղացանութեան արհեստը մեծ յեղաշրջում մը կրեց երկանաքարերու տեղ գլաններ դրուելուն եւ շոգիին՝ իր շարժիչ զօրութիւն՝ ընդունուելուն հետեւանքով: Բոլոր այս կատարելագործութիւններով, ջրաղացպանն այսօր ճշմարիտ ճարտարագործ մ'է եւ հին ջրաղացքը՝

գործարան մը ուր ցորենին բոլոր սննդարար մասը կը հանուի ալիւրի ձեւին տակ : Բայց այս յեղաշրջում ծանր անպատեհութիւն մը ունեցաւ : Ալիւրի գերարտադրութիւն մը պատճառեց, այսինքն պէտք եղածէն աւելի ալիւր արտադրուեցաւ : Վերջին կատարելագործութիւններով օժտուած գործարաններ հաստատուեցան հետզհետէ եւ ահագին քանակութեամբ ցորեն աղացին : Ջաղացքներ կան, որք կրնան օրը 2000 կենդինարէ աւելի ցորեն սպառել եւ այն ինչ ջաղացպանը, որ 20 տարի առաջ 30—40 պարկ ալիւր կը հանէր, այսօր կրնայ օրական 100—150 պարկ յանձնել : Եթէ հացին սպառումն ալ նոյն համեմատութեամբ աւելնար, կամ եթէ արտադրութեան յաւելեալ մասն ամենայն դիւրութեամբ արտածուէր, լաւ, ըսելիք չկար. բայց գործն այնպէս չէ : Փրանսայի մէջ, օրինակի համար, ջաղացպանութիւնն արդարեւ յառաջդիմած է, բայց իր արտադրութեան համար նոր հրապարակներ չէ կրցած գտնել : Ասկէ առաջ եկաւ ծանր տագնապ մը : Գործարանատէրք սկսան կատաղի մրցում մը ընել իրարու դէմ, իրենց շահուն մեծագոյն մասը վրայ տալով : Այս մրցումն այն աստիճանի հասած է որ ջաղացպանն իր ալիւրը կը ծախէ նոյն իսկ այն համեմատութենէն ալ վար, զոր ալիւրի գինը պէտք է ունենայ ցորենի գինին հետ : Հետեւեալ թիւերն աւելի պերճախօս կերպով կը խօսին . —

Տարի	Ալիւր 100 քիլո	Ցորեն	Տարեբուծիւն	Թեփ 100 քիլո.
		[Բարիգի հրպրկ.] 100 քիլոհրամ	Ցորենի եւ ալիւրի միջեւ	
1888	35,68	25,04	10,64	12,29
1889	34,50	23,62	10,88	10,26
1890	35,89	25,41	10,48	11,60
1891	38,91	27,70	10,21	13,05
1892	33,08	23,24	9,84	11,33
1893	28,91	20,92	7,99	12,45
1894	26,65	19,17	7,48	10,54
1895	27,28	19,13	8,18	8,70
1896	26,38	19,38	7,00	10,29
1897	33,34	25,31	8,03	10,65
1898	35,49	25,43	10,06	11,25

«Ազգային գրադարան»



NL0083828

